

**ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՆԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ
ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ՝ ՔԱՆԱՆԱՅԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՎ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԵԱՎ ՍՊԱՍԱԲՈՐՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,
ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆ ՌՈՒՄԻՆԻՈՅ ԵՒ ԲՈՒԼԱՐԻՈՅ
ՆԱՅՈՑ ԹԵՄԻ,
ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ,
ՈՐ Ի ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՌՈՒՄԻՆԻԱ**

Գոհունակության խոր զգացումով տեղեկացանք Ռումինիոյ եւ Բուլղարիոյ հայոց թեմական վարչութիւնից, որ հանդիսաւորապէս փոխախմբուելու է քաջակորով Առաջնորդիդ հոգեւոր սպասաւորութեան 40-ամեայ յորելեանը, որպէս արժանի հապուցումն բազմամեայ Ձեր անձնդիր ծառայութեան:

Նոգեւոր անհուն ուրախութիւն եւ մեծ մխիթարութիւն է Մեզ համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր ողջոյնները յղելու Ձեզ՝ Իջման Սուրբ Սեղանից ներշնչման ու ծառայութեան ուխտի զօրութիւն ստացած Ռումինիոյ եւ Բուլղարիոյ Տիրախնամ թեմի Առաջնորդիդ, որ ահա 40 տարիներ բոլորանուէր ջանքերով շէնացնում էք հայրենակարօտ Մեր գաւակաց ազգային-եկեղեցական կեանքը:

«Ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի» եւ «հաւաքն՝ ի գործոց»:

Սիրելի Սրբազան.

Արդարեւ, վաստակեալ ծառայութեան պարուրներով արդիւնաշատ եւ Լուսաւորչեան կանթեղից հաւաքոյ զօրութիւն զգեցած Եկեղեցոյ ուխտապահ զինաւորիդ կեանքը եւ գործը: Մեծ է Ձեր աւանդը ի փարաշխարհի բնակութիւն հաստատած

հայութեան կեանքում հոգեւոր մեր հայրենիքը քար առ քար վերակերպելու բարձր ու վսեմ առաքելութեան մէջ:

Լուսաւորչահասարակ նուիրական հաւաքոյ մեր օրրանին եւ բարեպաշտ մեր զաւակաց մարուցած Ձեր բիւր օրհնաբեր ծառայութեանց բարձր գնահատանքով՝ Հայրապետական այսու գրով Ամենայն Հայոց Սրբութիւն Սրբոց Միաձնաւէջ Մայր Աթոռից յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ ամենաջերմ մաղթանքները՝ «Տաքէ Տէր ի սրտի քում» ջերմեռանդ աղօթքով:

Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանին Հայրապետական Մեր մաղթանքն է նաեւ, որ Ամենախնամ Աստուած հովանաւոր Իր Աջով հանապազ օրհնութիւն բաշխի բարի ու հաւաքարիւմ ծառայիդ՝ պարգեւելով բազում տարիների քաջառողջ կեանք եւ առաջնորդական բեղմնաւոր ծառայութիւն:

Թող Երկնաւոր Տէրը երջանկութեան եւ հոգու բերկրանքի նորանոր առիթներ շնորհի Ձեզ՝ ի մխիթարութիւն Ռումինիոյ եւ Բուլղարիոյ բարեպաշտ հայորդեաց:

«Ողջ լերուք ի Տէր՝ զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալք ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ Գիրս Օրհնութեան

ի 15 ապրիլի

յամի Տեառն 2000

եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ 29